Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԿՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 6. Կոտայքի մարզ– ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024 – 31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.- 30.06.2024թթ. |
| Ներկայացման օր | 08.07.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.07.08
15:38:02 AMST

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- լվացքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 44 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 2 դեպքի վարում՝ նոր անձնագրի ձեռք բերում, 24 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ խաղերի, հետաքրքիր հանդիրումների, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 3 խմբակ՝ առողջ ապրելակերպ և առողջական ֆիզկուլտուրա, զարգացնող խաղեր, տիկնիկագործություն, որին մասնակցել է 38 շահառու:
  Կազմակերպվել է թվով 10 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 37 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝
  - ✓ «Սուրբ Զատիկ»,
  - ✓ «Ընթերցանության օր»,
  - ✓ «Թաղիքագործության օր»,
  - ✓ «Բարության օր»,
  - ✓ Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի ներկայացուցիչներին «Նուարդ» տիկնիկների ցուցադրություն,
  - ✓ Հրազդանի Ջրառատի միջնակարգ դպրոցի աշակերտների կողմից բեմականացված «Քաջ Նազար» հեքիաթի դիտում,
  - ✓ «Աշխատավորի օր»,
  - ✓ «Հաղթանակի օր»,
  - ✓ «Երեխաների պաշտպանության միջազգային օր» ,
  - ✓ ԵՄՈՒԿ-ի սաների ընդունելություն:

- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում իրականացվել է արվեստի, խաղային, հոգեբանական, ինտելեկտուալ 15 թերապևտիկ պարապմունքներ, որոնց մասնակցել է 25 շահառու:
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 1 շահառու օգտվել է լվացքի տրամադրման ծառայությունից:
- Թվով 5 շահառու օգտվել է վարսավիրական ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- ✓ Միջոցառումներ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/crtuX, https://shorturl.at/nvy89, https://shorturl.at/nAjKC, https://shorturl.at/ajuJP, https://shorturl.at/hBtLy , https://shorturl.at/yv0oo, https://goo.su/Xz2kd, https://clck.ru/3BXC3m):
- ✓ Այլ տեսանյութեր՝ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://goo.su/TqT9Jno, https://clck.ru/3BXBdz, https://shorturl.at/7MXq6 ):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- ➢ սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ➢ ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- ➢ աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- ➢ կենտրոնում սննդի կազմակերպում,
- ➢ լվացքի ծառայության տրամադրում,
- ➢ այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու, աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով՝

- ցերեկային կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և բարդ դեպքերի ուսումնասիրություններ,
- ցերեկային կենտրոնի պատասխանատուն եւ սոցիալական աշխատողը մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված «Դեպքի վարում» թեմայով դասընթացին,
- կենտրոնի պատասխանատուն մասնակցություն է ցուցաբերել ՄՍԾ Հրազդանի

ՏԿ-ին գործող 2 համակարգող խորհրդի նիստերին,
- կենտրոնի պատասխանատուն մասնակցություն է ցուցաբերել մասնակցություն է ցուցաբերել հոգաբարձուների նիստին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 44/40 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 28 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 1 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 1 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 39 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 44 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 39 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 0 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 40 |
| 5. 1 | Առողջ ապրելակերպ և առողջական ֆիզկուլտուրա | 29 |
| 5.2 | Զարգացնող խաղեր | 11 |
| 5.3 | Տիկնիկագործություն | 11 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 40 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 8 |
| 7. | Այլ ծառայություն (նշել), Լվացքի և վարսավիրական ծառայություններ | 6 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «08» 07.2024թ
(ստորագրություն, անուն, ազգանուն)